Ա-ԴՈ (ՀՈՎՀԱՆՆԵՍ ՏԵՐ-ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ). Ռուսական ցարերը և Հայկական հարցը: Առաջաբանը և ծանոթագրությունները՝ պ. գ. թ. Ռուբեն Գասպարյանի և պ. գ. թ. Ռուբեն Սահակյանի: Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2013, 161 էջ:

Վերջերս ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտը լույս ընծայեց նախախորհրդային և խորհրդային շրջանների պատմաբան Ա-Դոյի (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան, 1867–1954) հայ ժողովրդի պատմության նոր շրջանին վերաբերող, ծավալով ոչ շատ ընդարձակ, բայց խիստ ուշագրավ մի աշխատություն՝ «Ռուսական ցարերը և Հայկական հարցը» խորագրով: Ա-Դոն հայտնի է ընթերցողներին, առավելապես պատմաբաններին, Արևմտյան Հայաստանին նվիրված աշխատություններով: Արևմտյան Հայաստանն ուսումնասիրողները չէին կարող անտարբեր անցել «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները» (1912 թ.), նաև «Մեծ դեպքերը Վասպուրականում» (1917 թ.) Երևանում լույս տեսած աշխատությունների կողքով: Այդ երկու ուսումնասիրությունն էլ գրված էին այնպիսի բծախնդիր, մանրակրկիտ վերլուծություններով, որ ընթերցողը հակված էր մտածելու, թե դրանց հեղինակը արևմտահայ է, քաջատեղյակ իր հետազոտության օբյեկտներին և այնտեղ կատարվող իրադարձություններին: Նոր Բայազետում ծնված Հովհաննեսը խոր արմատներով իսկական Բայազետից էր, արևմտահայ, բայց դրա մասին նա ոչինչ չի նշում: XIX դ. 80–90-ական թվականների և XX դ. առաջին տասնամյակների հայ մտավորականության ակնառու ներկայացուցիչներից էր նա, որի ուշադրության կենտրոնում են եղել Արևմտյան Հայաստանը, նրա վարչական կառուցվածքը, ազատագրական շարժումները, Հայկական հարցը, հայության ազատագրության խնդիրները, ընդհանրապես հայ մշակույթին և նրա ակնառու ներկայացուցիչներին նվիրված բազմաթիվ հարցեր: Նոր լույս տեսած այս աշխատությունը գալիս է լրացնելու հայ պատմաբանի հրատարակված աշխատությունների շարքը:



Աշխատության առաջաբանը գրել են հրատարակիչները՝ պատմական գիտությունների թեկնածու, վաղամեռիկ Ռուբեն Գասպարյանը և պատմական գիտությունների թեկնածու Ռուբեն Սահակյանը: Ոչ ծավալուն առաջաբանը արտակարգ տարողունակ է իր բովանդակությամբ: Այն լիովին պատկերացում է տալիս պատմաբան Ա-Դոյի կյանքի և գիտական գործունեության մասին: Չնայած փոքր ծավալին՝ հեղինակներն ամբողջական են ներկայացնում Ա-Դոյի կյանքը և գիտական գործունեությունը:

Ընթերցողն այդ առաջաբանի միջոցով ծանոթանում է Ա-Դոյի գիտական և հասարակական գործունեությանը: Դրանում ներկայացված է Ա-Դոյի ուսումնասիրության կենտրոն՝ հայ հասարակական գործիչների մի ամբողջ փաղանգ (Իսրայել Օրի, Ներսես Աշտարակեցի, Խաչատուր Աբովյան, Միքայել Նալբանդյան և այլք), նաև ժամանակի իրադարձությունների գնահատականը:

Աշխատությունն սկսվում է «Երկու խոսքով», որտեղ Ա-Դոն գտնում է, որ հայ ժողովրդի պատմության այդ «մթին դրվագները» արժե հրապարակել: 1991 թ. վերջերին «Հայաստան» հրատարակչությունը ձեռնամուխ եղավ սույն աշխատության հրատարակությանը: Սակայն Հայաստանի շրջափակումը Ադրբեջանի կողմից և ռազմական գործողությունների ծավալումն

անհնար դարձրին գրքի հրատարակության գործը: Երկու տասնամյակից ավելի ժամանակ անց նորից օրակարգի խնդիր դարձավ գրքի հրատարակությունը, այս անգամ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտաշխատողների՝ Գասպարյան և Սահակյան Ռուբենների կողմից:

Աշխատությունն ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ, որովհետև այն նկարագրում, քննարկում է Արևելյան Հայաստանի (Նոր-Բայազետի, Երևանի) տարբեր վայրերի հասարակական կյանքը ականատեսի և մասնակցի աչքերով: Ընթերցողի աչքի առաջ հառնում է 1880-ական թվականների Նոր-Բայազետն իր տեղական և 1828–30-ական թվականների արևմտահայ գաղթած բնակչությամբ, ազգային, ավանդական սովորություններով, դրսի աշխարհից մեկուսացած «լճացած» կենցաղով: 14 տարին հազիվ բոլորած Հովհաննեսը փոխադրվում է Երևան: Ընթերցողի աչքի առաջ հառնում է XIX դարի 80-ականների Երևանը, որը գավառացի պատանու աչքին «հետաքրքիր էր ու գրավիչ» բուսականությունից զուրկ Նոր-Բայազետի համեմատ «ճոխ բուսականությամբ» «կանաչ տերևների ծով» Երևանը գրավիչ էր միայն այդ արտաքինով: Պատանին զարմանքով է նկատում ստվարաթիվ թուրքերի ներկայությունը քաղաքում, նրանց բռնության հետևանքով հայերի՝ թուրքերենի հմուտ իմացությունը: Քաղաքի արտաքինին մոտիկից ծանոթանալուց հետո Ա-Դոն անցնում է 1880-ական թվականներին Երևանում կատարված իրադարձությունների քննարկմանը: Ալեքսանդր II «ազատարար» և հայամետ՝ ցարի սպանությունից հետո գահ բարձրացավ Ալեքսանդր III-ը, որի գահակալության ընթացքում ծայր առավ հակահայ քաղաքականությունը՝ շարունակվելով Նիկոլայ II-ի ժամանակ: Հեղինակն ականատեսի աչքերով նկարագրում և բացահայտում է Սինոդի օբեր-պրոկուրոր Պոբեդոնոսցևի դրածոների գործունեությունը արևելահայ իրականության մեջ, ռեակցիայի ծավալումը, սնահայրուրակային կազմակերպությունների գործունեությունը, հայկական դպրոցների փակման հրամանը, դրանց գործադրումը և հայության պատասխան գործողությունները: Ընթերցողը սրտի ցավով է հաղորդակցվում ցարական ռեակցիոն ուժերի ծավալած հայահալած գործողությունների փաստերին, Երևանում կատարված դեպքերի հուշագրումով հավաստիանում տեղում և ամբողջ Անդրկովկասում նրանց կողմից կազմակերպված տարբեր ազգերի, մանավանդ հայերի ու տեղի թուրք-թաթարների միջև եղած բախումներով իրականացվող ցարական շինծու դատավարությունների ընթացքին, երբ տուժող կողմը միշտ լինում են հայերը, իսկ ցարական պաշտոնյաների կողմից հովանավորվողները՝ թուրք խաներն ու բեկերը, մեծահարուստները: Մի ամբողջ տասնամյակ՝ XIX դ. 80-ական թվականներին սեփական աչքերով ականատես լինելով ցարական պաշտոնյաների՝ նահանգապետի, ոստիկանության և այլոց կատարած հակահայ գործողություններին, այդ բոլորի մասին մանրամասն գրառումներ կատարելուց հետո հեղինակը հետադարձ հայացք է նետում XVII դարի 2-րդ կեսից սկսած հայ և ռուս ժողովուրդների (ավելի ճիշտ՝ ռուս պետական քաղաքական այրերի) հարաբերություններին, նպատակ ունենալով պարզելու Հայկական հարցի ծագումն ու ընթացքը ռուսական ցարերի օրոք և հետագայում» (էջ 32): Հեղինակի ուշադրությունը բևեռվում է Իսրայել Օրու հասարակական գործունեության վրա: Ընթերցողին մանրամասն ծանոթացնելով Օրու գործունեության վաղ շրջանից մինչև 1699 թ. Անգեղակոթի՝ հայ մելիքների ժողովի արդյունքը՝ անցում է կատարում նրա եվրոպական կողմնորոշումից դեպի ռուսականը: Հետաքրքիր մեկնաբանություններ է կատարում հեղինակը ռուսական ցարի՝ Պետրոս Մեծի գործունեության ոլորտների, հայերի ռուսական կողմնորոշման մասին, որն ընդհատվում է Օրու անժամանակ մահով: Սակայն վերջինիս մահով չընդհատվեց հայության ռուսական կողմնորոշումը: Աշխատության հեղինակը շարունակում է պատմական իրադարձությունների քննարկումը, պատմության թատերաբեմում են հայտնվում Եկատերինա II կայսրուհին, բարձրաստիճան հոգևորական Հովսեփ Արղությանը, նրա

մահից հետո Լազարյանների տոհմի արժանավոր հաջորդները:

Անհրաժեշտություն չկա հերթականությամբ շարադրել և քննարկել հայ գործիչների ջանքերը Ռուսաստանի օգնությամբ մահմեդական (պարսկական և թուրքական) լծից ազատագրվելու ուղղությամբ, նաև ընդգծելու ռուսական տիրապետողների և նրանց դիվանագիտական ջանքերի՝ հայ ժողովրդի և Հայաստանի անկախ պետականությունը վերականգնելու քողի տակ իրագործել իր սահմանների ընդարձակումը: Ի վերջո, հեղինակը հասնում է աշխատության գլխավոր նպատակներին՝ Ռոմանովների տան գահակալների մեջ «ամենաբացասական որակում» ունեցող, «դաժան բթամիտ, երբեք գրքեր չկարդացած» (էջ 45) Նիկոլայ I-ի գործունեության քննարկմանը: Օգտագործելով իր ժամանակակից ուսումնասիրողների աշխատությունները, մասնավորապես Ա. Երիցյանի «Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայքը», Ա-Դոն իր կողմից հավելելով նաև այլ փաստեր ու կատարելով բացահայտումներ, մերկացնում է Նիկոլայ I-ի և նրա կողմից նշանակված ցարական պաշտոնյաների, մանավանդ Կովկասի կառավարչապետ բարոն Ռոզենի և նրա կնոջ՝ բարոնուհու թալանչիական գործունեությունը: Հեղինակը գրում է, որ Նիկոլայ I-ի ժամանակից սկսած «Հայկական հարցի նկատմամբ սկսվում է նոր կուրս», որի բացահայտմանը ձեռնամուխ է լինում աշխատության հետագա շարադրանքում:

Արևելյան Հայաստանի ազատագրումը պարսկական լծից Ա-Դոն իրավամբ համարում է «նոր դարագլուխ» հայ ժողովրդի պատմության մեջ: Այդ շրջանի ամենահայտնի գործիչներ համարելով Խաչատուր Աբովյանին և Ներսես Աշտարակեցուն, հեղինակը շատ սեղմ, բայց հմուտ վերլուծության է ենթարկում նրանց գործունեության ամենաուշագրավ փաստերը և կատարում նույնիսկ այսօրվա համար ճիշտ եզրահանգումներ: Այսօր, երբ խորհրդային և հետխորհրդային շրջանի պատմաբաններն ու գրականագետները գրել և հրատարակել են Խաչատուր Աբովյանի մասին բազմաթիվ աշխատություններ, Ա-Դոյի՝ նրա մասին գրված հատվածը կարդացվում է մեծ հետաքրքրությամբ: Նույնը կարելի է ասել Ներսես Աշտարակեցու մասին, որի իբրև Ամենայն Հայոց կաթողիկոս ընդունելությանը Աբովյանն իր դպրոցի աշակերտների հետ միասին տալիս է այնպիսի փայլ ու երանգ, որ հրահրում է Երևանի գավառապետի և ցարական այլ պաշտոնյաների զայրույթը, որի պատճառով Աբովյանին խիստ նկատողություն է արվում և պատժում երեքօրյա կալանքով: Այս փոքրածավալ աշխատության 30 էջը նվիրված է Ներսես Աշտարակեցու մինչկաթողիկոսական շրջանի ժողովրդանվեր գործունեության լուսաբանմանը: Չնայած Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուն, դարձյալ խիստ ծանր էր հայության վիճակը: Ա-Դոն բացահայտ քննադատում է ցարական չինովնիկներին իրենց հայատյաց քաղաքականության համար՝ տարբերություն չդնելով Պարսկաստանի և Ռուսաստանի՝ հայության նկատմամբ գործադրած բռնությունների միջև: Աշխատության հեղինակը մեջբերում է կատարում ռուս պաշտոնյայի խոսքերից. «Հայք թալանվում, ավերվում էին աղալարների կողմից միմիայն դեպի ռուսաց տերությունն ունեցած ջերմեռանդության համար» (էջ 94): Այդ նույն հատվածում բծախնդիր քննարկված են և գնահատված գեներալ-ֆելդմարշալ, ապա ռուս-իրանական պատերազմի ժամանակ գլխավոր հրամանատար Պասկևիչի գործունեության բոլոր դրվագները, նրա հակահայ գործունեության հետևանքները և Ներսես Աշտարակեցու «պատվավոր» աքսորը Բեսարաբիայի հայկական թեմում: Արևելյան Հայաստանի իրադարձությունների այդ ընթացքի մեկնաբանություններով հեղինակն ընթերցողին փոխադրում է Արևմտյան Հայաստան, անդրադառնում 1890-ական թվականների կեսերին սուլթան Աբդուլ-Համիդի կազմակերպած հայկական կոտորածներին և ինքնապաշտպանական մարտերին: Իհարկե, այդ հարցերը արդիական արժեվորման տեսանկյունից նայելով, շատ և մանրամասն են քննարկվել, բայց Ա-Դոյի կողմից շարադրված փաստերը, փոքրիկ մանրամասները ընթերցվում են մեծ հետաքրքրությամբ: Այս հատվածում քննարկվում

են նաև մեծ տերությունների (առանձնապես Անգլիայի և Ռուսաստանի) դիվանագիտական գործիչների և՛ հայտարարությունները, և՛ գործունեության դրվագները, որոնք բացահայտում են նրանց հակահայ գործունեությունը: Ամենահետաքրքիրն այն է, որ Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Լոբանով Ռոստովսկու՝ «Մեզ պետք է Հայաստանը առանց հայերի» արտահայտությունը հեղինակը գնահատում է իբրև Պետերբուրգում ծնունդ առած դարձվածք, որը «վավերացվեց ցարական դիվանագետ Լոբանով Ռոստովսկու միջոցով և իրականացավ սուլթան Համիդի ձեռքով» (էջ 101): Ցարական կառավարության հակահայ քաղաքականության թիրախը դարձավ սկզբից հայերի ծխական դպրոցները, որոնք իրագործվեցին 1885 և 1898 թվերին: Այդ քաղաքականության բարձրակետը հայ եկեղեցու գույքի բռնագրավման 1903 թ. հունիսի 12-ի օրենքն էր, որի կիրառումը հանգեցրեց հայկական բոլոր հատվածների բողոքներին և ցույցերին: Ընդվզեց ողջ աշխարհի հայությունը: Դարձյալ պետք է նշել, որ այս իրադարձությունների մասին գրվել են բազմաթիվ աշխատություններ, սակայն Ա-Դոյի աշխատության այս դրվագները ոչ մեկի կրկնություն չեն, այլ ականատես ժամանակակցի՝ նույնիսկ փոքրիկ փաստերի հետաքրքիր շարադրանք և ճիշտ գնահատական: Առավել քան հետաքրքիր են ռուս-ճապոնական պատերազմի դրվագները, հայ-թուրքական (թաթարական) ընդհարումների սանձազերծումը ցարական չինովնիկների կողմից և դրանց հետևանքները, հեղինակի կողմից այդ չինովնիկներին տված այսօրվա առումով անգամ ճիշտ գնահատականներն ու բնորոշումները: Չնայած համառոտ շարադրանքին, բավական հանգամանորեն պարզաբանված են Կովկասի փոխարքայության վերականգնումը, նոր փոխարքա Վորոնցով-Դաշկովի «հայանպաստ» գործունեությունը, նրա միջնորդությամբ 1905 թ. օգոստոսի կայսերական նոր հրամանագրի հռչակումը, որով վերացվեցին 1903 թ. հունիսի 12-ի հայ եկեղեցական գույքի բռնագրավման և 1898 թ. հայոց դպրոցների փակման օրենքները: Բայց հայ-թուրքական ընդհարումները շարունակվում էին: Հեղինակը նկարագրում է Շարուր-Դարալագյազի, Էջմիածնի, Երևանի, Շուշիի, Զանգեզուրի և Գանձակի գավառների հայ-թաթարական ընդհարումները, որոնք, ըստ հեղինակի, իրագործվում էին ցարական «ադմինիստրացիայի և սև ռեակցիայի շոշափուկների միջոցով» (էջ 125): Ցարիզմի «հայամետ քաղաքականությունը» շարունակվեց և հանգրվանեց այս անգամ ՀՅԴ-ի դատավարության գործընթացով: Այդ ընթացքում ձերբակալվեցին բազմաթիվ հանրահայտ մշակութային գործիչներ (146 հոգի): 1912 թ. մարտի կեսերին սկսված դատավարությունը տևեց երկու ամսից ավելի: Ըստ աշխատության հեղինակի՝ դատարանի որոշումը «վարկաբեկեց ոչ միայն դատաքննությունը, այլև նման գործեր նյութող և կազմակերպող իշխանությանը»: 146 մեղադրյալներից դատարանը անմեղ ճանաչեց 116 հոգու: Հեղինակը հաղորդում է հետաքրքիր փաստեր. պետության վարկաբեկումը մեղմելու համար լուրեր տարածվեցին, թե դատի գլխավոր ղեկավար կամ դատախազ Լիժինը խելագարվել է և գտնվում է հոգեբուժարանում (էջ 134): Ցարիզմի մոլեգնող ռեակցիայի գործողությունները մեկնաբանելուց հետո հեղինակն անցնում է առաջին համաշխարհային պատերազմի, հայ կամավորական գնդերի կազմակերպմանը, երիտթուրքերի «հայամետ քաղաքականությանը», թուրքական պարտված բանակի, երիտթուրք ղեկավարների՝ հայության բնաջնջման գործընթացին,Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերի ինքնապաշտպանական մարտերին, Վանի հայկական կառավարության ստեղծմանը, մոտ երկու ամիս անց՝Վասպուրականիմեծ գաղթին: Թվարկված իրադարձությունները այնքան ընդարձակ են, թվում է, Ա-Դոն թռչում է դրանց վրայից, բայց այդ ընթացքում նա ընթերցողին հաղորդում է այնպիսի մանրամասնություններ այդ դրվագնե-*

---

* *Դաշնակցության դատավարությունը արտակարգ մանրամասներով լուսաբանված է Հր. Սիմոնյանի «Ազատագրական պայքարի ուղիներում» կոթողային աշխատության* III *հատորում (Երևան, 2010, էջ 414–491): Պարզ է, որ այն ժամանակվա պայմաններում Ա-Դոն չէր կարող ձեռնարկել նման գործ:*

րից, որ զարմանում ես հեղինակի գիտելիքների այդ անսպառ պաշարի վրա:

Վերջաբանում Ա-Դոն համեմատության եզրեր անցկացնելով ցարական և թուրքական կառավարությունների հայաջինջ քաղաքականության միջև՝ նշում է ռուսական կառավարության ձգտումը՝ Թուրքիայի Ռուսաստանին սահմանամերձ շրջաններում, որոնք դատարկվել են հայերից, վերաբնակեցնել ռուս գաղթականներով: Այդ հանգամանքը բացատրելով Լոբանով-Ռոստովսկու հայտնի՝ վերը հիշատակված հակահայ բանաձևով, հեղինակն իր աշխատությունն ավարտում է Ռուսաստանի փետրվարյան հեղափոխությամբ և ցարիզմի տապալման ակտով:

Այսպիսով, խիստ համառոտ, բայց նաև արտակարգ հանգամանալից աշխատության մեջ վերլուծվում և քննարկվում են մի մեծ ժամանակահատվածի ռուսական պետականության (ռուսական ցարերի) Հայկական հարցի նկատմամբ վարած փոփոխվող քաղաքականությունը: Որպես ընթերցող և ուսումնասիրող՝ կցանկանայի հրատարակված տեսնել առաջաբանում նշված Ա-Դոյի բոլոր ձեռագիր աշխատությունները: Լավ կլիներ նաև, որ գրվեր Ա-Դոյին և նրա աշխատություններին հարիր մի ծանրակշիռ հետազոտություն, որը կներկայացներ նրա գիտական, հասարակական-քաղաքական գործունեության ամբողջական պատկերը:

Գրախոսությունս ուզում եմ ավարտել մեծ շնորհակալությունս ուղղելով Գասպարյան և Սահակյան Ռուբեններին, ընդգծելով նրանց կատարած հետազոտական աշխատանքը, որն արտահայտվել է գիտական ծանոթագրություններում: Ա-Դոյի ներկայացրած ամեն մի պատմական անձ, իրադարձություն, երևույթ տողատակերում ստանում են իրենց սպառիչ բացահայտումը և պատասխանը: Ճիշտ է, դրանց մեջ տեղ են գտել նաև մի քանի անճշտություններ, բայց նրանց կատարած գործն այնքան ավելի ծանրակշիռ է, որ դրանք նշելու կարիքը չկա:

ԷՄՄԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ